

Հայաստանի Վերանկախացման 15ամեակի Առթիվ Խրախճանք Պարահանդես

*29 Սեպտեմբեր 2006
Երուսաղէմ*

Հայրենիքի վերանկախացման 15ամեակի առթիւ, վարչութեանս կողմէ կազմակերպուած խրախճանքին ներկայացան մօտ 90 հանդիսականներ, որոնք սիրուած երգիչ Կարօյի ճարտար ներկայացումը վայելեցին ամբողջ 4 ժամ, ապրելով ժողովրդական ու ազգային երգերու մթնոլորտը:

Ճաշի սպասարկման պահուն ներկաները հետեւեցան վիտիներիզի մը ցուցադրումին, որը կը ներկայացնէր շրջանիս Երուսաղէմի, Հայֆայի եւ Եաֆայի սկաուտներու Հայաստան կայացած Հ.Մ.Ը.Մ.ի 8րդ համահայկական բանակումի մասնակցութեան յիշատակելի ռուպէները:

Ցուցադրութեան աւարտին նոյն բանակումին մասնակից սկաուտները ստացան բանակումի իրենց մասնակցութեան պատուոյ վկայագիրները:

Առաւել երկու ժամ սրահին մթնոլորտը պահեց իր շքեղութիւնը ու աւարտեցաւ կէս գիշերէ ետք ժամը 1:30ին:

Օրուան առթիւ նուիրատութիւն կատարեցին եղբ Կարօ Տեմիրճեան (200\$) եւ Տօթթ. Անուշ Նազգաշեան (200 ՆԻՇ):



Յաւելեալ նկարներ տեսնել ԱՆՁԼԵՐԷՆ բաժնի մէջ: